

Մեզի ծանօթ է որ Յակոբ Զուլայեցի էջմիրածնէն, աւելի ճիշտ Երեւանէն, զաղտազոյի փախաւ Վրաստան Յունիս 1, 1677ին: Յունիս ամիսէն (1677) մինչեւ Նոյեմբեր 1678 սակայն Առաքելի քսածին պէս 16 ամիս չ'ընէր, այլ 17 ամիս (եւ 11 օր): Ան կ'աւելցնէ, որ իբր թէ Ռուսաստանի վրայով Զուլայեցին փորձեր է անցնիլ, սակայն չյաջողելով... «զարձ արարեալ (Զուլայեցին) ընդ կողմամբն Թէոդուզօյսի գալ ընդ Կասպիականաւ (վրան Պոնտոսիւ)»: Եւ այսպէս ալ կը յայտնուի նամակին կեղծու խարդախ նպատակը, այսինքն ջանալ խաբել Հաւատոյ Տարածման Ժողովին զլիւսաւորները: Առաքել ինքզինքը ցոյց տալով աղբեցիկ Հայ եկեղեցական մը իբր մտերիմ զաղտնեաց, խորհրդակից եւ գործակից Զուլայեցիին, այսինքն Հայոց կաթողիկոսին: Աշխարհազրական այս ի՞նչ խառնիճաղանճութիւն... Թէոդուզօյիս (Կարին)... Կասպիականաւ եւ Պոնտոսիւ...: (Խեղճը գոնէ ասոնցմէ մէկն ու մէկը զատէր...): Եւ որպէս զի իր արտառոց ստուերինը վաւերական չպարով մը ներկայացնէ վկայութեան կը խառնէ իրեն պէս ուրիշ մը Վարդան (Եպիսկոպոս) անուն, որուն գործունէութեան մասին արդէն կարգացինք Հաւատոյ Տարածման Ժողովոյն Դիւանէն առնուած ուրիշ վաւերագրութեան մը մէջ՝ Մայիս 10, 1679 թուականով գրուած Դաւիթ վարդապետէ, ուր կը տրուին մանրամասնութիւններ, որոնք կը համապատասխանեն Առաքելի պատմածին, այսինքն Թողաղ (Եւզոկեայ) գալը Վարդանին եւ անկէ հալածական փախչիլը, եւ այլն. թէեւ Վարդանին (*) հալածուիլը Առաքել կը ջանայ Զուլայեցիին Հոռոմ չղալուն հետ կապել, այսպէսով իր սքնուցած սուտին յայտնուելուն ատեն իսկ չքմեղանալու առիթ գտնելով:

Առաքել նամակէն աւելի արտառոց կերպով կը ստէր Վենետիկի մէջ Պապական Նուիրակին ըսելով որ Յակոբ Դ. կուզար Ռուսաստանի վրայով 25 եպիս-

կոպոսներով: Խեղճ Յակոբ Զուլայեցին, որուն փախուստին ժամանակ ոչ ոք կար հետը եւ մինչեւ Կ. Պոլիս ճամբորդեց անշուք եւ գրեթէ միայնակ:

1678 Օգոստոսի սկիզբը եւ 6-էն առաջ Առաքել Սբալազոյէն, որ Ալբրախանի արեւելեան ափին, Իտալիոյ հանդիպակաց փոքր նաւահանգիստ մըն էր: Վենետիկ կը ժամանէր եւ 12 Նոյեմբերին դեռ հոն՝ Վենետիկ էր: Չեմ գիտեր որ Առաքելի գրածին պէս Կ. Պոլսէն կուզար: Բայց Տէր Յակոբ Գրիգորենց Պելլերատէն կը գրէր 10 Ապրիլ 1679ին Հաւատոյ Տարածման Ժողովին, որ «Շորոթեցի Առաքել արքեպիսկոպոսն, եւ մեր սիրելի վարդապետն, յոյժ համարձակ քարոզեր է վասն հաւատոյ (հոռոմեացական, աստ առաջի իմ ճողու (Զուլայի) մարդիք երգուան թուրքի մատնել զինք, զիս ոչ ճանաչէին թէ նորանէ առեալ եմ աւազ սարկաւազութիւն, վասն սիրոյ ծանուցանեմ, եւ վասն իմ խղճմտանաց ասացէք իւր յորժամ ետ դառնա թող լաւ զգուշանայ»: Ուրեմն Առաքել Օգոստոս 1678էն առաջ Պելլերատ կը գտնուէր, եւ անկէ Սբալազօ ու Վենետիկ կ'անցնէր:

Առաքել կ'երեւի թէ յաջողեցաւ Հոռոմ երթալ եւ հաւանարար հոն էր 10 Ապրիլ 1679ին երբ Տէր Յակոբ Գրիգորեանց իր մասին կը գրէր Հաւատոյ Տարածման Ժողովին:

Ի՞նչ «մեծաւ ուխտադրութիւն» կըրնար զոյութիւն ունենալ Առաքելի եւ ծերունազարդ եւ հաւատահաստատ կաթողիկոսին միջեւ: Բնական է ոչինչ: Եւ սակայն այլեւս ծերացած Առաքել հանդիստ տեղ մը կը փնտռէր մնալու: Հոռոմ բնական է ըստ իրեն յարմարագոյն վայրըն էր, ուր սակայն տեղ ու աստիճան գտնելու համար պէտք էր արժանիք մը ցոյց տալ, աղբեցիկ եւ կարող մէկը երեւալ: Ատոր հասնելու համար Առաքել միջոցներու մէջ խորութիւն գնելու չափ յիմար չէր, երբ գիտէր թէ Հոռոմ իրեն պէտքերուն ապաստանարան չէր կրնար ըլլալ եւ արտակարգ գործունէութիւնը միայն կրնար իրեն բան մը շահեցնել:

Արդ Առաքել անմիջապէս տեսաւ թէ Զուլայեցիի մասին կանխապէս տարածուած թշնամական քսութիւնները կրնա-

(*) Ասիկա հոռոմեացական վարդապետ Օհանեան կամ Յուսեանեան է, Եպիսկոպոս եւ Արքեպիսկոպոս: